

Ալբերտ Ա. Ստեփանյան
Պատմ. գիտ. դոկտոր

ՏԱՐՏԱՄ ԱՆՑՅԱԼԱԿԱՆՈՒԹՅՈՒՆԻՑ ԴԵՊԻ ՊԱՏՄՈՒԹՅՈՒՆ

Տեքստ, պատում, մեկնություն*

Բանալի բառեր – անցյալականություն, պատում, տեքստ, պատմագետ, ուսայնակ, երկխոսություն, հիշողություն, նպատակ, հիմնախնդիր:

Մուտք

Պատմության հիմնախնդրի ուսումնասիրությունը հնարավոր է մշակութային ամենալայն առնչությունների համատեքստում, համատեքստ, որի կարևորագույն չափումը գրության **տեքստն** է կամ դրա հնարավորությունը¹: Թե՛ մշակույթը, թե՛ պատմությունը հնարավոր են միայն տեքստի ուղղակի կամ հիպերտեքստային ընթերցման, մեկնության և ըմբռնման պարագային²: Ընդամին, էական չէ՝ այն գրավոր է, թե բանավոր:

Մշակութային և պատմական տեքստերը (ավելի կամ պակաս շեշտա-

* 2005 թ. «Պատմություն և կրթություն» գիտատեսական և մեթոդաբանական հանդեսի N 1-2-ում լույս տեսած այս հոդվածի լրամշակված տարբերակի հրատարակումը նպատակ ունի քննարկումներ սկսելու նրանում արծարծված հիմնարար հարցերի շուրջ: Պարզ նկարագրություններից համառորեն չհրաժարվող պատմաբանների մեր սերունդը պետք է յուրացնի պատմագիտության տեսական ու մեթոդաբանական սկզբունքները՝ ինքներս մեզ և մեր հանրությանը չխաբելու համար: Քանի որ պատմությունը գիտություն է, իսկ պատմագետը՝ գիտնական, մեզանում ներկայումս հրատարակվող հաստատվող «փաստակույտերը» շատ ավելի փոքր արժեք ունեն, քան մինչ օրս անարձագանք մնացած՝ պրոֆ. Ա. Ստեփանյանի այս ոչ մեծ հոդվածի հարցադրումներն ու եզրակացությունները: Խմբ.: Ընդունվել է տպագրության 20.03.2014:

1 Տե՛ս **Marwick A.**, The New Nature of History: Knowledge, Evidence, Language, London, Palgrave, 2001, pp. 10-11.

2 Հիպերտեքստ հասկացությունը լայնորեն կիրարկվում է արդի տեղեկագիտության մեջ: Այն արտահայտում է հեղինակի, տեքստի և ընթերցողի սկզբունքորեն նոր հարաբերություններ: Ընդամին, ընթերցողն այլևս անփոփոխ կրավորական բևեռ չէ. տեքստի իմաստային շրջանակները զգալիորեն կախված են նրա մտահոգևոր փորձից, ընկալումից և մեկնության կարողությունից: Այդու՛ նա տեքստի համահեղինակ է ճանաչվում: **Landow P. G.**, Hypertext: Critical Theory and New Media in an Era of Globalization, Baltimore, J.Hopkins Univ. Press, 1997, pp. 89-94.

2 (ՃԲ) փարի, թիվ 1 (45) հունվար-մարտ, 2014
ՎԷՆ համահայկական համադես

դրությամբ) ենթադրում են **պատումի** (narrtive) այս կամ այն տարատեսակը, որին ներհատուկ են ինչպես սեմանտիկ (իմաստային), այնպես էլ սեմիոտիկ (նշանային) մակարդակները: Եթե առաջինն արտահայտում է պատումի պատճառահետևանքային և բովանդակային զարգացումները, ապա երկրորդը՝ խորքային ռիթմերը: Վերջին դեպքում կարևորվում են պատումի հարադրական (կառուցվածքային) և համակարական (սիմպաթետիկ) առնչությունները³:

Դիտարկվող հարթությունների հարափոփոխ միասնությունը կազմում է տեքստի մյուս կարևոր բաղադրիչի՝ **տեղեկույթի** բովանդակությունը: Համաձայն արդի պատկերացումների՝ վերջինս ծավալվում է ժամանակի (առնվազն) երկու հարթությունում. ընթացիկ, որը համապատասխանում է նրա իմաստաբանությանը, և կառուցիկ, որն առնչություն ունի նշանաբանության հետ: Այլ խոսքով՝ յուրաքանչյուր տեքստային միջավայրում առկա են ինչպես առօրեական, այնպես էլ արտաժամանակային (կամ դրան միտված) տեղեկության շարքեր: Դրանք հակադիր են միմյանց, սակայն միանգամայն թերի են և անիմաստ՝ առանց մեկմեկու⁴: Ավաճն առավել քան վերաբերում է պատմական տեքստերին, որոնց իմաստաժամանակային տարասեռությունները վերջին կես հարյուրամյակի ընթացքին եղել և մնում են պատմասիրական հետազոտությունների կենտրոնում:

1. Պատմական տեքստ

Պատմական տեքստի իմաստային ու կառուցվածքային առանձնահատկությունները և դրանց ուսումնակրթական հնարավոր զարգացումները կազմում են հետազոտական մի ուրույն բնագավառ: Այն խնդիր ունի բացահայտելու հանրույթի հարաբերումն իր և արտաքո միջավայրի հետ: Ժամանակի հոլովույթում այս գործընթացը հանգեցնում է նրա ինքնության կայացում-այլափոխմանը⁵:

Պատմական տեքստն ուսումնասիրելիս տեսաբանները, հետևելով տակավին Հերոդոտոսից սկզբնավորվող ավանդույթին, առաջադրում են երեք կարևորագույն հարցադրում. **ինչ (է պատմությունը), ինչո՞ւ (են ուսումնասիրում), ինչպե՞ն (են ուսումնասիրում)**: Ներկա քննարկման ծիրում մենք նպատակ ունենք կենտրոնանալ միայն երրորդ հարցադրման վրա՝ հընթացս անդրադառնալով, հարկավ, նաև առաջին երկուսի ինչ-ինչ դիտանկյուններին:

Եվ այսպես՝ մեր խնդիրն է պարզաբանել՝ ինչպես է շարակարգվում և շարահյուսվում պատմական տեքստը: Այս կապակցությամբ ցանկանում ենք սկզբից նեղ ընդգծել, որ մենք այն չենք դիտարկում իբրև պատումի ինքնաբավ մի միջավայր, որի իմաստային կառույցներն ու ստորոգությունները շատ առումներով պայմանավորում են պատմական անցյալի

3 Տե՛ս **Bolter J.**, Writing Space: The Computer, Hypertext and the History of Writing, New Jersey, London, Lawrence Erlbaum Associates, 1991, pp. 48-51.

4 Տե՛ս **Carr E.H.**, What is History?, London, Macmillan, 1998, pp. 29-30.

5 Տե՛ս **Ricoeur P.**, Memory, History, Forgetting, Chicago, Chicago Univ. Press, 2004, pp. 22-25.

բովանդակությունը: Հետարդիական (պոստմոդեռնիստական) այս մոտեցումը, որքան էլ արդյունական, բանասիրական վերլուծությունների իմաստով, հեռու է պատմության համարժեք ընկալումից: Առավել ընդունելի է այն մոտեցումը, որը պատմական տեքստը ներկայացնում է իբրև համադրական մի միջավայր, որտեղ **տարտամ անցյալականությունը վերածվում է պատմական անցյալի**⁶:

Մոտավոր ուրվագծերով նման ընկալումը սկսել է ձևավորվել դեռևս XIX դ. սկզբներից, երբ պատմագիտությունը սկսել է ներկայանալ իբրև ուրույն հետազոտական միջավայր՝ իր հիմնախնդիրների և մեթոդների (ավելի կամ պակաս) գիտակցումով: Ի հետևանս դրա՝ անտիկ և միջնադարյան պատմագրին վերջնականապես փոխարինելու է եկել պատմագետը, որն իր գործունեության մեջ կրկնում է գիտության կուտակած հետազոտական փորձը: Եվ արդի պատմասիրությունն այդ գործունեության մեջ առանձնացնում է հետևյալ դիտանկյունները՝ հետազոտության համար անհրաժեշտ տեխնիկական հմտություններ (էվրիստիկա), գիտաթեմայի արդի մեկնաբանություններ, բուն հետազոտական աշխատանք և ստացված արդյունքների շարադրանք՝ ըստ գիտագեղարվեստական ոճի⁷:

Ձևականորեն սրանք են պատմական տեքստի կազմակերպման անհրաժեշտ ենթափուլերը: Դրանք կարող են ներդաշնակվել տվյալ գործընթացի իմաստային զարգացումների համատեքստում միայն: Եվ այդ կապակցությամբ պատմագետից առաջին հերթին պահանջվում է բանաձևել իր հետազոտական հիմնախնդիրը և դրանից բխող ենթախնդիրները՝ դարաշրջան, քաղաքակրթական կառույց, տնտեսություն, մշակույթ, կրոն, քաղաքական կյանք, պատմական դեպքեր, դեմքեր, գաղափարներ, տեսություններ և այլն⁸: Այդու՝ նա հնարավորություն է ստանում գնահատելու և հետազոտության միջավայր ներբերելու հարակից գիտությունների արդյունքները՝ մարդաբանություն, ընկերաբանություն (սոցիոլոգիա), քաղաքագիտություն, միջազգային հարաբերություններ, իմաստասիրություն և այլն: Դրանց ներգործությամբ պատմագետը հստակեցնում է իր նպատակը ինչպես հետազոտական, այնպես էլ հասարակական հնչեղության առումով: Բառիս բուն իմաստով՝ հենց այս կետից էլ սկսվում է պատմագետի արհեստավարժ աշխատանքը:

Հետազոտական հիմնախնդիր և նպատակ ստորոգությունները դիտարկելիս տեսաբանները սովորաբար մեկնակետ են ընդունում պատմագետի անհատականության ընկերային (մասամբ նաև անձնական) չափումները: Եվ իբրև դրանց ամենացայտուն դրսևորում՝ առանձնացնում են պատմագետի անհատականության **հասարակական ներգրավվածության** աստիճանը⁹: Վերջինս կոչված է պատասխան տալու այն հար-

6 Այս ստորոգություններով մենք փորձում ենք արտահայտել անգլալեզու գիտական գրականության ծիրում բավական լայն տարածում ստացած ambiguous past և historical past եզրերը: Այդ մասին մանրամասն տես **Marwick A.**, Two Approaches to Historical Study: The Metaphysical (Including «Postmodernism») and Historical, *Journal of Contemporary History*, 1 (1995), pp. 22-24; **Stepanyan A.**, Relations between Armenian Studies in the United States and Armenia, *Journal of Armenian Studies*, 7 (2003), pp. 133-134.

7 Տես **Heller A.**, *A Theory of History*, London, Routledge and P. Kagan, 1982, pp. 54-57.

8 Տես **Gardiner P.**, *The Nature of Historical Explanation*, Oxford, Oxford Univ. Press, 1952, pp. 41-43.

9 Այս ստորոգությունն առանձնակի սևեռումի առարկա է անգլիական (հատկապես opu-

ցին, թե նա ինչ չափով է արտահայտում իր դարաշրջանի աշխարհայացքային և գիտամշակութային արժեքները՝ ինչպես ազգային, այնպես էլ համամարդկային: Հետազոտողներից մեկի դիպուկ ձևակերպմամբ՝ «[...] ձձմարիտ պատմագետն իր դարաշրջանի բանական աչքն է՝ ընդունակ կառուցակազմելու անցյալի հեռանկարը»¹⁰: Մի խոսքով՝ պատմագետի մեջ պետք է ներկա լինեն առնվազն երկու անհատականություն՝ ինքը և իր ժամանակաշրջանի մտահոգևոր արժեքների ընդհանրական կրողը: Հետազոտողները հաճախ վերջինս նույնացնում են ընդհանրական (և այդու՝ պայմանական) ընթերցողի հետ: Այստեղից մեկ եզրահանգում ևս. պատմագետի ներաշխարհում գրելը և ընթերցելը զուգահեռ (և շրջելի) գործընթացներ են¹¹:

Ավաճան, անշուշտ, բնականոն կյանքով ապրող համակեցական միջավայրերի մասին է: Մինչդեռ ներփակ-ամբողջատիրական միջավայրերում պատկերը միանգամայն այլ է. պատմագետի հասարակական ներգրավվածությունն այստեղ վերասերվում է ըստ քաղաքական պատվերի, քանզի պայմանական ընթերցողը բացարձակապես գերակայում է պատմագետի նկատմամբ: Հարդյունս դրա՝ պատմական ձձմարտությունն իր տեղը զիջում է, այսպես կոչված, առօրեական պատշաճին՝ իր անհատական և հանրության դրսևորումներով¹²:

2. Պատմական տեքստ և երկխոսություն

Արդիական **բանական աչքն**, ինքնին վերցրած, այնուամենայնիվ, բավարար չէ պատմական արժանահավատ տեքստ ստեղծելու համար: Հարկ է հիշել, որ պատմական գիտելիքն ընդհանրապես և պատմական տեքստը մասնավորաբար, ունեն շեշտված երկխոսային բնույթ ու բովանդակություն¹³: Որպես կանոն՝ արդի պատմագետը չի առնչվում հետազոտական նախնական նյութին: Նա գործառում է սկզբնաղբյուրների տվյալներով, սկզբնաղբյուրներ, որոնք ստեղծվել են հեռավոր (կամ մոտ) անցյալում ինչ-որ մեկի կողմից, որն իր հերթին (գիտակցված թե անգիտակից) գտնվել է հասարակական ներգրավվածության մեջ¹⁴: Այսինքն՝ կուտակել է իր դարա-

Ֆորդյան) պատմափրության ծիրում՝ the social involvement of historian: Տե՛ս **Marwick A.**, 2001, pp. 38–44; **Collingwood R.**, The Idea of the History, Oxford, Clarendon, 1946 p. 215.

10 **Gardiner P.**, 1952, p. 28.

11 Տե՛ս **Collingwood R.**, 1946, p.282. Ժամանակին մենք այս երևույթը դիտարկել ենք Մովսես Խորենացու Պատմության ծիրում: Գրվելու և ընթերցվելու բևեռներն այստեղ մարմնավորված են պատմահոր և իր պատվիրատու-մեկենասի՝ իշխան Սահակ Բագրատունու կերպարներով: Խորքային առումով վերջինս Խորենացու alter ego-ն է: Եվ բանավիճելով նրա հետ՝ Պատմահայրն, ըստ էության, տրամախոսում է ինքն իր հետ: **Степанян А.** Развитие исторической мысли в древней Армении: миф, рационализм, историописание, Ер., Изд. АН АРМ ССР, 1991, с.171.

12 Այս առումով մեզ համար թերևս առավել ճանաչելի են խորհրդային պատմագետների այն սերունդները, որոնց համար «պայմանական ընթերցողը» Կուսակցության ամենատես աչքն էր՝ իր գաղափարական պատվերներով ու ցուցումներով:

13 Խնդիրն ավելի քան ընդգրկուն է. «Ցուրաբանչյուր տրամաբանական հարացույց՝ կիրարկված հումանիտար գիտելիքի նկատմամբ, կարիք ունի վերակենդանացման՝ ի հաշիվ նրա երկխոսայնացման»: **Бахтин М. М.**, К методологии гуманитарных наук, в кн. “Эстетика словесного творчества”, Москва, Изд. Искусство, 1986, с. 381–382.

14 Տե՛ս **Gardiner P.**, 1952, p. 34; **Teggart F.**, The Theory and Process of History, Berkley, Univ. of

շրջանի հիմնակագմիկ գաղափարներն ու մշակութային արժեքները: Ասվածը հիմք է տալիս **պատմական ճշմարտությունն** ամենաընդհանրական իմաստով բանաձևելու իբրև հերմենևտիկ (մեկնողական) գործընթաց, հընթացս որի համադրվում են առնվազն երկու տարասեռ դարաշրջանների արժեքային համակարգերը¹⁵:

Այդ համադրության կարևորագույն մեխանիզմը, ինչպես նշվեց վերը, երկխոսությունն է, որը ծավալվում է պատմագետի ներքին մտահոգևոր տարածքում: Եվ բնական է, որ երկխոսային հանդիպման կիզակետը փոփոխական է և շատ առումներով կախված այն բանից, թե **պատմագետը** որքանով է արտահայտում իր ժամանակաշրջանի արժեքները և որքանով է ի գործու կարդալ, մեկնել և ըմբռնել **պատմագրի** ներկայացրած արժեքային համակարգը¹⁶: Հակառակ պարագային պատմագետին սպառնում է անցյալին վերագրել իր ժամանակաշրջանի իմաստների համակարգը՝ ջնջելով այն էական տարբերությունները, որոնք առկա են ներկայի և անցյալի միջև: Պատմական անցյալի արդիականացման այս միտումը, որ հույժ հատկանշական էր դրապաշտական (պոզիտիվիստական) ընկալումներին, այժմ գրեթե լիովին հաղթահարված է: Հնարավոր է նաև մյուս ծայրահեղությունը, երբ պատմագետն իր ուսումնասիրությունը կառուցում է՝ դեկլարավելով բացառապես անցյալի արժեքային համակարգով: Դա պատմական ժողովուրդի դրսևորումն է, երբ «[...]պատմագետի առջև անցյալի դժներն, ըստ էության, մնում են փակ: Անցյալը բառիս բուն իմաստով չի վերածվում արդիական պատմական տեքստի»¹⁷: Առաջին դեպքում անտեսվում է այն իրողությունը, որ անցյալի յուրաքանչյուր հատված ունի իր ուրույն ու անկրկնելի բովանդակությունը: Երկրորդ դեպքում, ընդհակառակը, այդ անկրկնելիությունը հասցվում է բացարձակության: Երկու դեպքում էլ, ըստ էության, խզվում է երկխոսության հնարավորությունը, և պատմական տեքստն ու ճշմարտությունը հայտնվում են իմաստի ու ըմբռնումի ծիրից անդին:

Այս առումով մեկ անգամ էլ ընդգծենք, որ պատմական ճանաչումն անպայմանորեն տրամախոսային է: Եվ այդու՝ նրան ներհատուկ է հիպերտեքստային ընդլայնման (և, ընդհակառակը, սեղմման) հնարավորությունը. որքան բարդ ու ընդգրկուն հարցեր է պատմագետն ուղղում անցյալին, այնքան բարդ ու ընդգրկուն պատասխաններ են ակնկալվում¹⁸: Հարցերի ու պատասխանների բնույթն ու բովանդակությունը կրկին ու կրկին պայմանավորված են համակեցական-գիտամշակութային (և անձնական) կյանքի այն համատեքստով, որի ծիրում ներգրավված է պատմագետը:

California Press, 1960, pp. 17-19.

15 Ասվածը «գիտելիքի արխտոլոգիայի» համընդհանուր սկզբունքի մի մասնավոր արտահայտությունն է միայն, որը խնդիր ունի «[...]թե թե հաղթահարելու [ճանաչողության առջև ծառայած] տարբերությունները, այլ, ընդհակառակը, վերլուծելու և պարզաբանելու դրանց իմաստը՝ այդու խստիվ տարբերակելով դրանք»: Միայն տարբերություններից մեկնարկելով՝ կարելի է հանգել արդյունական երկխոսության: Տե՛ս **Foucault M.**, The Archeology of Knowledge, New York, Pantheon, 1969, p.239.

16 Տե՛ս **Gardiner P.**, 1952, p. 62.

17 **Marwick A.**, 2001, pp. 48-49; **Попк А. А.**, Нарратив как проблема методологии исторической науки, “Ученые записки Тарт. университета (Труды по философии)”, 18 (1975), с. 154-155.

18 Տե՛ս **Teggart F.**, 1960, p.71.

Ի հետևանս այս իրողության՝ պատմությունը կարիք ունի անընդհատ վերագրության: Զի հընթացս ժամանակի փոփոխվում է բանական աչքի **նսպնյակը** և վերջինս սկսում է անցյալում նկատել փաստեր, իրողություններ և իմաստային զարգացումներ, որոնք ցայդ մնացել էին աննկատ կամ արժևորվել թերի: Դրանց հիմամբ ձևավորվում են նոր ըմբռնումներ ու հղացքներ¹⁹: Ասվածը հիմք է տալիս պնդելու, որ պատմական ճշմարտությունն անընդհատ մոտեցման գործընթաց է և այդու՝ կայուն և հարաբերական ըմբռնումների ու ստորոգությունների յուրահատուկ շարժուն հարակարգություն²⁰:

Այդ հարակարգությունը ենթադրում է երկու ներհակ հնարավորություն. մի կողմից՝ պատմագիտական գիտելիքների ու ըմբռնումների շարունակական ընդլայնում և զարգացում, մյուս կողմից՝ դրանց կտրուկ և արմատական վերակառուցում: Առաջինն արտահայտում է պատմագիտության բնականոն ընթացքն ու զարգացումը: Միչդեռ երկրորդը հանդիպում է համեմատաբար ավելի հազվադեպ՝ մեծ մասամբ հարդյունս ընկերային համակեցության և գիտակցության արմատական տեղաշարժերի: Որպես կանոն այն ուղեկցվում է նաև բարձր հուզականությամբ, որը միանգամայն անհարիր է պատմական ճանաչողության ոգուն և տառին: Այս իրողությունը հստակորեն բանաձևել է դեռևս հռոմեական պատմիչ Կ. Տակիտուսը՝ ըմբռնել և գրել պատմությունը **առանց զայրույթի և կրքի – sine ira et studio**:

3. Պատմական տեքստ և պատում

Պատմական տեքստի և ճշմարտության վերաբերյալ այս ընդհանրական դատողություններից այժմ փորձենք անդրադառնալ այն հարցին, թե դրանք կոնկրետ ինչպես են ձևավորվում: Ինչպես նշվեց վերը, պատմագետի ելակետային նյութը տարտամ անցյալականությունն է, որը տարաշերտ ու տարիմաստ է: Նրա ծիրում առկա են բազմապիսի, հաճախ ներհակ դեպքեր, շարժումներ ու միտումներ՝ ընկերային, մշակութային, կրոնական, մարդկային-անհատական բնույթի և չափումի: Հետևաբար, անիմաստ է նրանում միասնական խաղընթաց (այուժե) ու բովանդակություն դիտարկելը: Այն տեքստային համահավաք միջավայր չէ, նրան ներհատուկ չեն ներքին կայուն լծորդումներ ու սահմաններ: Լավագույն դեպքում կարելի է խոսել դրանց հնարավորության մասին միայն²¹: Հետազոտողներից ոմանք, հարկավ, ոչ առանց չափազանցության, տարտամ անցյալականությունը համադրում են «բրոունյան շարժմանը»²²:

19 Տե՛ս Teggart F., 1960, pp. 72–73; **Кнабе Г.С.**, Материалы к лекциям по общей теории культуры и культуре античного Рима, Москва, Изд. “Индрик”, 1994, с. 164–167.

20 Տե՛ս Marwick A., 2001, p. 51.

21 Տե՛ս Eisenstein E., The Rise of the Reading, in Communication in History: Technology, Culture, Society, New York, Allyn and Becon, 1995, pp. 106–108. Կենսընթացը պատումի և գրության վերածվելու գործընթացի վերաբերյալ մանրամասն տե՛ս **Лотман Ю. М.**, Литературная биография в историко-культурном контексте (К типологическому соотношению текста и личности автора), “Избранные статьи в трех томах”, т.1, Таллин, Изд. “Александра”, 1992, с. 365–370.

22 Sheerin D., Deleuze and Ricoeur: Disowned Affinities and the Narrative Self, New York, London, Continuum International Publ. Group, 2009, p. 103.

Սակայն մենք ավելի հակված ենք այդ համադրության համար օգտագործել արդի տեղեկութաբանության (ինֆորմատիկա) եզրաբանությունը՝ ընդգծելով, որ **տարտամ անցյալականությունն** ընդհանուր առմամբ **անընթեռնելի** է:

Ասվածը հիմնավորելու նպատակով արդի հետազոտողները զարգացնում են տրամաբանական լծորդումների մի ամբողջ շարք: Իբրև առաջին քայլ նրանք մեկնարկում են **տարտամ անցյալականություն** և **պատմական անցյալ** ստորոգություններից և գտնում, որ անցումը մեկից դեպի մյուսը գիտական անցյալատեսության աներկբա նախապայմանն է: Այս կապակցությամբ նրանք շրջանառության մեջ են դնում ևս մեկ ստորոգություն՝ **պատմական հիշողությունը**. «Հիշողությունը կյանքն է՝ ծնյալ այն հանրույթներից, որոնք կոչված են ի գոյություն հանուն հենց դրա: Այն հարընթաց շրջափոխության մեջ է՝ բաց ինչպես հիշումի, այնպես էլ մոռացումի համար: Անգիտակից է իր իսկ կերպախեղումներին, ենթակա ուղղորդումների և յուրացումների: Ի զորու է երկար ժամանակ մնալու կրավորական-անկենդան, բայցև՝ ժամանակ առ ժամանակ վերակենդանանալու»²³:

Հետազոտողների մեկ այլ խումբ էլ հակված է տարտամ անցյալականության և պատմական հիշողության կապը ներկայացնելու իբրև նույնականություն: Իսկ դա ծնող համակեցական միջավայրը սահմանում է իբրև **կենսաշխարհ** (lifeworld), որի կրողը հայում է շրջակա միջավայրը ներսից՝ պլաստիկ-պատկերագրական շարակարգության տեսքով²⁴: Տիրապետող են վերանհատական (կոլեկտիվ) զգացողությունները, պատկերացումները և ըմբռնումները: Վերջիններս բազմաչափ են և բազմիմաստ՝ գուրկ այուժեստային միագիծ զարգացումներից:

Հիշողության այս տարատեսակը թերևս համադրելի է կիկերոնյան **բնական հիշողությանը** (memoria naturalis), որի ծիրում տակավին գերակայում են զգայական պատկերները: Սակայն ո՛չ հռետորական արվեստը, ո՛չ (մանավանդ) պատմությունը չեն կարող բավարարվել լոկ վերջինիս սահմանափակ հնարավորություններով: Անհրաժեշտ է հաղթահարել դրա պատկերագրությունը և ձևավորել հիշողության նոր տարատեսակ՝ **արվեստական հիշողությունը** (memoria artificosa) [Cic., De orat., II, LXXXVI, 351-357]²⁵:

Արվեստական հիշողությունն արդի հումանիտար մտքի ծիրում երբեմն սահմանվում է իբրև **հիշում** (remembering): Այդու նախ և առաջ հատկանշվում է նրա ստեղծագործ-անհատական բնույթն ու բովանդակությունը: Եվ դա բացատրվում է այն իրողությամբ, որ հիշումն անպայմանորեն ունի իր հեղինակը, ով վերաձևում է պատմական հիշողությունը համաձայն իր նպատակների²⁶: Այլ խոսքով՝ հեղինակը **հետազոտական**

23 **Nora P.**, Between Memory and History: Les Lieux de Mémoire, Representations, 26/1 (1989), p. 8.

24 Տե՛ս **Habermas J.**, The Theory of Communicative Action, v.2 Lifeworld and System: A Critique of Functionist Reason, Boston, Beacon Press, 1985, pp.153-198. Նույն գաղափարը հաճախ լուսարանվում է ըստ Մ. Հայդեգերի **ներժամանակություն** (within-timeness) հղացքի ծիրում: Հմնմ. **Ricoeur P.**, Time and Narrative, v.3, Chicago, Chicago Univ. Press, 1988, pp. 60-68.

25 **Yates F.**, The Art of Memory, Chicago, Univ. of Chicago Press, 1966, pp. 3-5..

26 Պատմության տեսաբանները հաճախ այս գործողությունը որակում են իբրև **հիշողության**

բռնություն է իրագործում իր նախնական նյութի նկատմամբ՝ նպատակավ կազմակերպելու այն համաձայն որոշակի նպատակի և շարակարգության: Այս գործողությունը նկատվում է իբրև տարտամ անցյալակա-նության հաղթահարման և պատմական անցյալի կայացման իրական քայլ:

Տվյալ կապակցությամբ կրկնենք մեկ անգամ էլ. պատմական անցյալը տեքստային է՝ բանավոր, ծիսական, թե գրավոր: Ավելին՝ անպայմանորեն **պատում** է (narrative), քանզի կառուցված է ըստ զարգացման սկզբունքի: Այսինքն՝ ունի իր հստակ բովանդակային սկիզբը, զարգացումը և ավարտը: Եվ ընդունված է մտածել, որ այս գծային-սյուժետային ծավալումը կատարվում է համաձայն հստակ լեզվական խաղերի, որոնք անմիջական կապի մեջ են տվյալ ընկերային միջավայրի իմաստային կողերի հետ²⁷: Իր տեսական զարգացման պարագային նման մոտեցումն ի զորու է ձևավորելու հետազոտական մի ուրույն բնագավառ, որն արդի հումանիտար միտքը բանաձևում է իբրև պատմության պոետիկա²⁸:

Հիմնախնդրի այս դիտանկյան համակողմանի քննությունը թողնելով հետագային՝ այժմ լոկ արձանագրենք, որ միայն այս մակարդակում են պատմական հիշողությունն ու պատումը հասնում իրենց **կատարումին** (ἐτελέχεια): Եվ կարծում ենք, հենց դա նկատի ունի Պլատոնը՝ բանաձևելով. «Հիշողությունը բացակայի ներկայությունն է» [Plato, Teatet, 194a]:

Այլ խոսքով՝ հիշողությունը և պատումը անմիջական աղերս ունեն ժամանակի հետ և միտված են նրան շրջելիություն հաղորդելու նպատակին: Շրջելիություն, սակայն ոչ թե անցյալի տոսկական պատճենման ծանապարհով, ինչպես դա ներհատուկ է առասպելամտածողությանը, այլ նրա իմաստապատճառական վերակառուցման ճանապարհով: Ավելի ճշգրիտ՝ հիշողությունը ենթադրում է անցյալի ընդհանրացում ըստ որոշակի ճանաչողական հղացքի: Հարդյունս՝ տարտամությունն իր տեղը գիջում է միաչափ պատումային միավորների (կամ դրանց ցանցի): Եթե հիշողության ներգործությամբ անհատի կյանքը վերածվում է **կենսագրության**, ապա պատմական անցյալի ներգործությամբ հանրույթի կյանքը՝ ընթեռնելի ու մեկնելի պատմական պատումի²⁹:

պատմականացում: Տե՛ս **Ricoeur P.**, *Memory, History, Forgetting*, Chicago, Chicago Univ. Press, 2004, pp. 403–404; **King M.**, *A Guide to Heidegger's Being and Time*, New York, State Univ. of New York Press, 2001, pp.336–349.

²⁷ Տե՛ս **Wittgenstein L.**, *Philosophical Investigations*, Malden (Ma), Oxford, Wiley-Blackwell, 2009, pp.143–137; **Deitz M., Arrington R.L.**, *Wittgenstein's Language-Games and the Call to Cognition, Behaviorism*, 12/2 (1984), pp. 2–10.

²⁸ Տե՛ս **White H.**, *Metahistory: The Historical Imagination in Nineteenth-Century Europe*, Baltimore (Me), The Johns Hopkins Univ. Press, 1975, pp. 81–87..

²⁹ Այս հիմնախնդիրն առաջին անգամ դիտարկվել է դեռևս ստոիկյան իմաստասիրության ծիրում: Ընդամին, կարևորվում էր ինչպես առանձին անհատի, այնպես էլ հանրույթի (հան-ձին հետազոտողի) անաչառ ինքնաքննությունը (αὐτοψία): Տե՛ս **Rist J.**, *Stoic Philosophy*, Cambridge, Cambridge Univ. Press, 1977, pp. 136–138.

4. Պատմագետի աշխատանքը

Տարտամ անցյալականությունից անցումը դեպի պատմական անցյալի և ընթեռնելի պատմական տեքստ-պատումի՝ կազմում է պատմագիտության հիմնական բովանդակությունը: Այն միջնորդվում է պատմագետի մասնագիտական աշխատանքով, որտեղ կարևոր դերակատարություն ունեն նրա ընտրած մեթոդաբանությունը և մասնագիտական դպրոցը:

Պատմագետի աշխատանքի հետազոտական բնույթը կողավորված է հենց **պատմություն** հղացքի մեջ՝ սկզբնավորված տակավին հին հույների միջավայրում: Հունարեն *ἱστορία* գոյականը ու դրա բայական ձևը՝ *ἵστορέω* – «տեսնել/տեսանել», «քննել», «իմանալ», սերում են համիմաստ հնդեվրոպական նախաձևից **ueit*³⁰: Այստեղից են նաև հին հնդ. *véda*, ռուս. *видеть* (*ведать*), *весть*, գերմ. *weisen/Wissenschaft* և հայերեն գիտնալ (գիտելիք), գիտություն իմաստային զարգացումները: Հունական միջավայրում *ὁ ἱστορικός* եզրը նախապես ներկայացնում էր տոհմացեղային դատավորին, որի պարտականությունն էր համակողմանի դիտարկել և քննել հայցող ու պատասխանող կողմերի փաստերն ու փաստարկները և ապա հանգել դատավճռի՝ արդար-ընդունելի ինչպես կողմերի, այնպես էլ ողջ հանրության համար: Հետագայում այս եզրով սկսեցին ներկայացնել ընդհանրապես բոլոր հետազոտողներին: Եվ պատմագիրը դարձավ դրա մասնավոր արտահայտություններից մեկը: Ընդամին, աստիճանաբար հաղթահարվեց դատավորի դերակատարությունը և ընդգծվեց նրա աշխատանքի պատմաքննական բնույթը:

Այսպիսին էր թե՛ Հերոդոտոսի, թե՛ Թուկիդիտեսի, թե՛ Քսենոփոնի ինքնընկալումը³¹: Այլ խոսքով՝ հնուց անտի պատմագրի աշխատանքը գնահատվել է իբրև մտահոգևոր շարժում դիպվածից դեպի պատճառը, ակնհայտից անհայտը, առօրեականից խորքայինը, ժամանակավորից կայունը և այլն: Այս ընթացքին, սկսելով զգայական ընկալումներից՝ տեսողություն (ή *ὄψις*) և լսողություն (*τὸ ἀκουστικόν*), նա անցում էր կատարում դեպի մտավոր գործունեության ավելի բարձր ոլորտներ՝ հանգելով մտահայեցողության (ή *νόσις*): Այն նպատակ ուներ բացահայտելու պատմական իրադարձությունների ներքին իմաստն ու տրամաբանությունը³²:

Նման անցումը պատմական տեքստում ծավալվող իմաստային զարգացման հիմնական բովանդակությունն է: Սակայն, ինչպես նշվեց վերը, պատմագետն անմիջականորեն չի առնչվում իր ելակետային նյութին՝ տարտամ անցյալականությանը: Իր հետազոտության գիտաթեման, խնդիր-նպատակը և մեթոդաբանությունը սահմանելով՝ նա անպայմանորեն անդրադառնում

30 Տե՛ս **Тахо-Годи А. А.**, Эллинистическое понимание термина “история” и родственных с ним, “Вопросы классической филологии”, 2 (1969), с. 127–128.

31 Այս առումով հույժ հատկանշելի է հետևյալ փաստը. Հերոդոտոսն իր աշխատությունը վերնագրել էր պարզապես *ἱστορία*, այսինքն՝ Հետազոտություն [անցած իրադարձությունների]: Եվ միայն աղեքսանդրյան գիտնականներն այն կոչեցին «Հույն-պարսկական պատերազմի պատմություն»՝ բաժանելով ինը գրքերի՝ ըստ ինը սուսաների: Տե՛ս **Denniston D.D., Pearson L.**, Herodotus, The Oxford Classical adictionary, Oxford, Clarendon, 1992, pp.507–509.

32 Տե՛ս **Thompson J., Holm B.J.**, A History of Historical Writing, v.1 New York, Macmillan, 1942, pp .46–48; **Pédech P.**, La méthode historique de Polybe, Paris, Belles Lettres, 1964, pp. 53–56.

է սկզբնաղբյուրներին և նախորդ հետազոտողների աշխատություններին: Դրանք կապող օղակ են իր և տարտամ անցյալականության միջև:

Սկզբնաղբյուրները (primary sources) միավորում են նյութական մշակույթի և գրության բոլոր այն տեքստերը (կամ դրանց պահպանված հատվածները), որոնք ստեղծվել են քննության առարկա դարաշրջանում՝ ի հետևանս անմիջական շփումի, հայեցումի և ըմբռնումի: Դրանցում դեռ գերակա են զգայական ընկալումները՝ «անցյալի առարկաները, դեմքերը, ձայները, կեցվածքները»³³: Որպեսզի վերջիններս կտրվեն իրենց անմիջական գործառնական միջավայրից և դառնան իրական սկզբնաղբյուր (բացելով իրենց պատմական բովանդակությունը), անհրաժեշտ նախապայմանները կրկին արդի պատմագետի «աչքը և ոսպնյակն» են: Այլ խոսքով՝ սկզբնաղբյուրին նույնպես ներհատուկ է հիպերտեքստային ընդլայնման կամ տղման հատկանիշը: Այն նույնպես երկխոսային բովանդակություն ունի³⁴:

Իսկ մնացած բոլորը համարվում են երկրորդային աղբյուրներ (secondary sources), քանզի ստեղծվել են հետագայում՝ շնորհիվ իրենց հեղինակների հղացման ու ձիգի: Եվ այդու՝ հանդիսանում են առաջինների ուղղակի կամ անուղղակի մեկնությունները³⁵: Վերջին հաշվով, նրանց արժեքն ու իմաստը նույնպես հիպերտեքստային է, քանզի պատմագետը դրանք քննում, վերլուծում և վերաձևում է՝ ելնելով իր ժամանակաշրջանի պատկերացումներից: Ուստի կարելի է հանդիպել հետազոտությունների, որոնք մի ժամանակ բարձր են գնահատվել, բայց այժմ արժեզրկվել են, և ընդհակառակը, հետազոտություններ, որոնք թեպետ անցյալում թերագնահատվել են, բայց այժմ գնահատվում են բարձր:

Համենայն դեպս, ձյմարիտ պատմագետը չի կարող բավարարվել այլոց հետազոտությունների մեկնաբանություններով: Ուստի նախնական ծանոթությունից հետո նա անհրաժեշտություն է զգում վերադառնալու և սևեռվելու սկզբնաղբյուրների վրա՝ ծեսեր, հնագիտական գտածոներ, դրամներ, արվեստի ու ճարտարապետության հուշարձաններ, արխիվներ, տեսագրություններ, հուշագրություններ, պատմագրական երկեր և այլն: Դրանցում արտացոլված են դեպքեր, իրադարձություններ, դեմքեր, գաղափարներ, պատկերացումներ, հաստատություններ, սովորություններ՝ իրենց պատճառական կամ դիպվածային, համաժամանակյա կամ տարածամանակյա կարգավիճակներով:

Իր հետազոտական հիմնախնդրի դիտանկյունից պատմագետը նախ և առաջ տարբաժանում է սկզբնաղբյուրը պատումի տարրական մասնիկների՝ հնարավորինս մաքրելով դրանք պատահական և դիպվածային իրողություններից: Այդ գործընթացը սովորաբար բնութագրում են իբրև սկզբնաղբյուրի վերլուծություն և քննադատություն: Այն արդյունավորվում

33 **Langlois Ch. V., Seignobos Ch.**, Introduction to the Study of History, New York, H.Holt & Co., 1904, p.102.

34 Տե՛ս **Brundage A.**, Going to the Sources: A Guide to Historical Research and Writing, Malden (Ma), Oxford, 2012, pp. 6-8.

35 Սկզբնաղբյուրները և երկրորդային աղբյուրները կազմում են մի ուրույն աստիճանակարգ՝ համապատասխան տվյալ պատմական տեքստի իմաստային զարգացումներին և նպատակին: Տե՛ս մանրամասն՝ **Marwick A.**, 2001, pp. 155-164.

է պատմական փաստերի հաստատմամբ, փաստեր, որոնք համադրելի են մշակութային տեքստերի տեղեկություններին³⁶, այսինքն՝ սահմանային իմաստային միավորներ են (ատոմներ), որոնք, ինքնին վերցրած, դեռևս քիչ բան են նշանակում³⁷: Ուստի անհրաժեշտություն է ծագում դրանք վերամիավորելու: Սա էլ կազմում է սկզբնաղբյուրի վրա պատմագետի աշխատանքի հաջորդ փուլը: Ի հետևանս՝ պատմական փաստերն սկսում են շարակարգվել սկզբնաղբյուրի պատումային (հնարավոր) հարթություններից մեկում: Հարկավ, այն նույնպես պայմանական բնույթ ունի³⁸, սակայն այնպիսի պայմանականություն, որը հնարավորություն է տալիս ներթափանցելու սկզբնաղբյուրի իմաստային խորքերը³⁹: Շնորհիվ սկզբնաղբյուրի տարբաժանման և վերամիավորման այս տարամետ գործողությունների՝ բացահայտվում են վերջինիս սեմանտիկ և սեմիոտիկ կառույցները՝ ժամանակի առօրեական և տեսական չափումներով:

Պատմագետի այս արհեստավարժ աշխատանքով սկզբնաղբյուրն սկսում է մեկնաբանվել նրա հետազոտական նպատակի դիտանկյունից: Այլ խոսքով՝ «թարգմանվում է արդի գիտական լեզվի»: Ուստի պատրաստ է (թե՛ առանձին փաստերի, թե՛ ամբողջականության իմաստով) փոխադրվելու պատմագետի հետազոտական տեքստի պայմանական միջավայր: Պատրաստ է համադրվելու այլ սկզբնաղբյուրների հետ, որոնք արդեն անցել են մշակման համանման գործընթացի բովով:

Այդ համադրությունն ապահովելու նպատակով պատմական փաստերը շարակարգվում են գծային շարքերի ձևով՝ իբրև ինքնակա իմաստային համալիրներ կամ տրամասույթներ (discourse), դրանք իրենց հերթին՝ իբրև իմաստային պարբերություններ, էջեր և գլուխներ, որոնց պատումային հարակներն են ընթացիկ անցքերը, դեպքերը և պատմական խոշոր իրադարձությունները: Դրանց համակարգմամբ կազմավորվում է պատմական հետազոտական տեքստի պատումային շարակարգությունը: Վերջինս առավելաբար արտածական (դեդուկտիվ) բնույթ ունի, զի կազմակերպվում է ըստ պատմագետի հետազոտական խնդիր-նպատակների և արդեն ուրվագծվող արդյունքների⁴⁰: Ավաճող հիմք է տալիս պատմական տեքստն ընդհանուր գծերով բնութագրելու իբրև պայմանական մտածական միջավայր⁴¹: Յուրաքանչյուր գիտության ներհատուկ են այսօրինակ տեքստեր, դրանց միջոցով հնարավոր է դառնում բացահայտել ու ձևակերպել ուսումնասիրվող առարկայի հիմնարար իմաստները՝ եզրերի, բանաձևերի, ստորոգությունների և հղացքների ձևով:

Ինչպես նշել ենք վերը, պատմական տեքստի պարագային, խոսքն

36 Տե՛ս **Библер В. С.**, Исторический факт как фрагмент действительности, “Источниковедение. Теоретические и методологические проблемы”, Москва, “Наука”, 1969, с. 85–88.

37 Հետարդիական (պոստմոդերնիստական) ընկալմամբ նման կազմալուծումը տարածվում է համամշակութային մետատեքստի նկատմամբ: Տե՛ս **Sheehan P.**, Postmodernism and Philosophy, in The Cambridge Companion to Postmodernism (ed. By S.Connor), Cambridge, Cambridge Univ. Press, 2004, pp. 22–24.

38 Տե՛ս **Kuroda S.**, Réflexions sur les fondements de la théorie de la narration: Langue, discours, société. Paris, Penguin, 1975 pp. 260–264.

39 Տե՛ս **Библер В. С.**, 1969, с. 95.

40 Տե՛ս **Langlois Ch. V., Seignobos Ch.**, 1904, pp. 104–106.

41 Տե՛ս **А. А. Порк**, указ. соч., с. 157.

անցյալի իմաստային խորքերն ընթերցելու և մեկնաբանելու մասին է: Հենց այս իրողությունը նկատի ունեն պատմական հերմենևտիկայի (մեկնարկետ) ներկայացուցիչները՝ լծորդելով պատումը տեքստային ժամանակի հետ⁴²:

5. Պատումային շարակարգություն և պատմական ժամանակ

Այժմ անդրադառնանք այն հարցին, թե ինչ ճանապարհով է կառուցակազմվում պատմական տեքստի գծային շարակարգությունը: Հետազոտողները սովորաբար առանձնացնում են երկու ճանապարհ՝ պատճառահետևանքային (կաուզատիվ) և ժամանակային (խրոնոգրաֆիկ): Դրանք կազմում են այն առանցքը, որի շուրջ լծորդվում են պատմական փաստերը՝ ստեղծելով տեքստի և պատումի համաչափ ու համասեռ հյուսվածքը⁴³:

Պատմական տեքստում պատճառահետևանքային լծորդությունների մասին գրվել է բավական շատ՝ մեծ մասամբ իմաստասերների կողմից: Ուշադրության կենտրոնում եղել է առավելաբար «բնության և պատմության տեքստերի» ներհակությունը՝ այն իմաստով, որ առաջինի ծիրում գործում են օրենքներ, օրինակափություններ և զարգացումներ, իսկ երկրորդի ծիրում՝ փոփոխություններ, տեղաշարժեր և միտումներ: Կանտականության և հատկապես նորկանտականության ջանքերով վերջիններիս վերագրվել է առավելաբար բարոյական իմաստ և բովանդակություն՝ միտված առ կատարելություն: Եվ դա աներկբա քայլ առաջ էր՝ ի բաղդատություն մի կողմից՝ դրապաշտական-մարքսիստական (նոմոթետիկ), մյուս կողմից՝ պրագմատիստական (իդեոգրաֆիկ) ավանդույթների⁴⁴: Առաջինն էական տարբերություն չէր տեսնում բնության և պատմության միջև: Պատմությունն ընկալում էր իբրև անցյալում ընթացած և այժմ էլ շարունակվող մի գործընթաց՝ իրեն ներհատուկ ընդհանրական ու անխախտ պատճառներով, նպատակներով ու գերակայություններով: Եվ պատմագետի խնդիրն էր համարվում լոկ բացահայտել այդ անխաթար չափումները՝ համապատասխան յուրաքանչյուր դարաշրջանի պայմաններին⁴⁵: Ինչ վերաբերում է երկրորդին, ապա այն պատմության մեջ բացարձակացնում էր եզականի դերը՝ դեմքեր, իրադարձություններ, գաղափարներ: Այս պարագային, ընդհակառակը, անտեսվում էին պատմության ընդհանրական չափումները: Բացարձակացվում էին առանձնահատուկն ու անկրկնելին: Ուստի պատմության ընթացքը կարծես փշուր-փշուր էր լինում: Եվ համարում էին, որ այն ենթակա է առաջին հերթին նկարագրության՝ ի հաշիվ, հարկավ, տեսական բացատրությունների ու մեկնաբանության⁴⁶:

Երկու դեպքում էլ, սակայն, գերակայում էր ժամանակի մի այնպիսի ընկալում, որտեղ այն ներկայանում էր իբրև ինքնակա, պատմությանը արտա-

42 Տե՛ս **Kuroda S.**, 1975, pp. 82–83; **Ricœur P.**, Narrated Time, Philosophy Today, 29/4(1985), pp. 271–273.

43 Տե՛ս **Brundage A.**, 2012, pp. 31–34.

44 Տե՛ս **Marwick A.**, 2001, pp. 247–249.

45 Տե՛ս **Langlois Ch. V., Seignobos Ch.**, 1904, pp. 92–93.

46 Տե՛ս **Thompson J., Holm B.J.**, 1942, pp. 132–135.

քինից պարտադրված չափում, առաջին դեպքում՝ իբրև ճակատագրական անխուսափելիություն, իսկ երկրորդ դեպքում՝ ճակատագրական դիպված: Անտարակույս, եղել են բազում այլ մոտեցումներ, բայց շեշտելով այս երկու ծայրահեղ դեպքերը՝ ցանկանում ենք կարևորել մեզ համար առավել ընդունելի համադրական մոտեցումը: Այն խուսափում է պատմական ժամանակն առանց նրա ներքին բովանդակության դիտարկելուց: Ժամանակն անքակտելի է բուն պատմությունից, և վերջինիս ելևէջումներն ու ռիթմերը հավասարապես վերաբերում են նաև պատմությանը. «Պատմական ժամանակը նման է կամրջի՝ գցված այն անջրպետի վրա, որը բաժանում է տիեզերական ժամանակը **սպրված ժամանակից**: Իրական է շնորհիվ պատմագետի աշխատանքի այն հնարքների, որոնք կոչված են վերակերպավորելու ժամանակն ըստ պատմության»⁴⁷: Այդ պատճառով էլ պատմական ժամանակը երբեմն խիտ է ու թանձր, երբեմն՝ նոսր ու սակավ՝ կախված նրա իրադարձութենական և իմաստային հագեցածության աստիճանից: Գրության տեքստի անդրադարձով՝ դա պատումի և ժամանակի փոխկապակցության հերթական դրսևորումներից է: Ասվածը ճիշտ է ինչպես ազգային, այնպես էլ համաշխարհային պատմական տեքստի առումով:

Եվ անհամաչափ պատմական ժամանակի առանցքի վրա շարակարգվում են տարատեղ պատմական փաստերը՝ պատճառական, համադրական, համակարական և այլ տիպի լծորդումներով: Այս առումով, կարծում ենք, կարելի է ընդունելի նկատել այն ըմբռնումը, համաձայն որի պատմական ժամանակը միավորում է պատմության ծիրում գործող բոլոր իրական և հնարավոր կապերն ու առնչությունները⁴⁸: Այլ խոսքով, բառի լայն առումով ժամանակը պատմական պատճառականության (կամ դրա բացակայության) կարևորագույն չափումն է⁴⁹: Նման մոտեցմամբ ըմբռնելի է դառնում պատմական տեքստի հիմնարար հատկորոշիչներից մեկը, ըստ որի՝ ժամանակը գերակա է պատմության բոլոր բաղկացուցիչների նկատմամբ: Երիցս արդարացի է պատմահայր Մովսես Խորենացին՝ բանաձևելով. «[...] ոչ է պատմութիւն ձշմարիտ առանց ժամանակագրութեան» [Խոր., II, 82]:

Լոկալ (տեղային) դեպքերի ու իրադարձությունների իմաստային շարքերի համադրությամբ ստեղծվում է լոկալ (ազգային) ժամանակը, իսկ լոկալ ժամանակների համադրությամբ՝ գլոբալ (համաշխարհային) կամ քաղաքակրթական ժամանակը: Քաղաքակրթական ժամանակներն իրենց հերթին կազմում են տոտալ (համընդհանուր) ժամանակը: Այս անցումներն արգասավորվում են պատմական ժամանակի համապատասխան պարբերացումներով: Դրանց միջոցով առավել առարկայորեն է բացահայտվում ըմբռնումների այն համակարգը, որով առաջնորդվում է տվյալ դարա-

47 Ricœur P., 1985, p. 263.

48 Տե՛ս Schaie K.W., Historical Time and Cohort Effects, Phyladelphia, Pensylvania Univ.Press., 1982. pp.7-9.

49 Հարկավ, ասվածը բացարձակացում է, սակայն դրա (և նման բացարձակացումների) միջոցով առավել ընդգծվում է պատմական ճանաչումի արմատական առանձնահատկությունը: Համաձայն վերջինիս՝ պատմության ծիրում ժամանակը գերակա է մնացած բոլոր չափումների նկատմամբ: Տե՛ս Atkinson R. F., Knowledge and Explanation in History, London, Macmillan Press, 1978, pp. 76-81.

շրջանի պատմական միտքը:

Միայն (ավելի կամ պակաս ընդունելի) պարբերացման պարագային է, որ անցյալի տարտամ հոսունությունը վերաճում է պատմական ժամանակի: Առաջինի տարտամ բազմաչափությունն իր տեղը զիջում է երկրորդի նպատակամետ ընթացքին⁵⁰: Հարկավ, այդ նպատակամիտության նախադրյալներն ստեղծում են անցյալի գործիչները՝ իրենց գործողութենական կամքով և ծրագրերով: Եվ այս իմաստով պատմությունն արմատականորեն զանազանվում է հիմնարար գիտություններից, որտեղ այդ գործոններն իսպառ բացակայում են⁵¹:

Նախնիների համակեցական կամքը, որպես կանոն, արտացոլվում է սկզբնաղբյուրների մեջ: Սակայն վերջինս ինքնաբերական ներգործությամբ չի կարգաբերում պատմագետի հետազոտական ժամանակի կառուցվածքը. ո՛չ լոկալ, ո՛չ գլոբալ, ո՛չ էլ տոտալ ժամանակը ինքնաձին չեն: Անհրաժեշտ է սերունդների արհեստավարժ և անդուլ աշխատանք՝ անցյալի անհատականությունների, պատմագիրների և արդի պատմագետների «կամքերն ու ծրագրերը» համակարգելու ուղղությամբ: Երկխոսելով անցյալի հետ՝ պատմագետն անընդհատ ճշգրտում, վերիմաստավորում և (երբեմն էլ արմատականորեն) վերակառուցում է պատմական ժամանակը: Զի, ինչպես նշել ենք վերը, փոփոխվում է նրա մշակութային աչքի ուսպնյակը՝ փոփոխելով պատմությանն ուղղված նրա հարցերի բնույթն ու իմաստը:

6. Պատմագետի անհատականությունը

Այս հիմնախնդրին մենք արդեն մոտեցել ենք տարբեր դիտանկյուններից: Արդ փորձենք ամբողջացնել պատկերը: Շեշտենք մեկ անգամ ևս. պատմագետի անձը սկզբունքային կարևորություն ունի պատմության տեքստի և պատումի կայացման գործում: Նրա կերպարը և հետազոտական աշխատանքի ոճն ու մակարդակը տվյալ հանրային գիտամշակութային զարգացածության կարևորագույն չափորոշիչներից են: Դրանք ամրագրված են պատմագետների արհեստախմբի (կորպորացիա) մասնագիտական և բարոյական սկզբունքների մեջ, սկզբունքներ, որոնք ձևավորվում և զարգանում են պատմագետների սերունդների համալսարանական կրթության և մասնագիտական գործառնության ընթացքին: Մեծ կարևորություն ունեն նրանց փոխադարձ շփումները ինչպես նեղ մասնագիտացումների, այնպես էլ լայն հարցադրումների և ընդգրկումների առումով, ինչպես ներազգային, այնպես էլ միջազգային մակարդակով՝ համատեղ գիտակրթական ծրագրեր, գիտաժողովներ, հրապարակումներ և այլն: Այլ խոսքով՝ պատմագետի աշխատանքը խմբային բնույթ ունի: Միայն այդ իրողության գիտակցման դեպքում նա կարող է իրեն զգալ մասնա-

⁵⁰**Ambiguous current of the past և historical time** ստորոգությունները նկատվում են իբրև արդի պատմագիտության կարևորագույն մեկնակետեր: Դրանցից ելնելով՝ կարելի է հասնել պատմական տեքստի արդյունական մեկնաբանությունների: Տե՛ս **Atkinson R. F.**, 1978, pp. 102–106.

⁵¹ Այս մասին մանրամասն տե՛ս **Риккерт Г.** Науки о природе и науки о культуре. Москва, Изд. “Республика”, 1998, с. 68–75.

կիցն այն locus communis-ի, որ կոչվում է արդի պատմագիտություն⁵²:

Ի հետևանս դրա՝ պատմագետի մտահոգևոր տարածքում լոկալ ժամանակային չափումներն ու արժեքները համահարաբերակցվում են իրենց գլոբալ և տոտալ հարակներին: Դա էլ իր հերթին նախապայմաններ է ստեղծում ազգային (և տարածաշրջանային) պատմությունները քաղաքակրթական խոշոր կառույցների ծիրում դիտարկելու համար: Այդու՝ տեղի է ունենում պատմական լոկալ տեքստերի իմաստային-կառուցվածքային ընդլայնում-ձգբրտում: Ասվածը մեկնության յուրահատուկ ձև է, հրնթացս որի իրական կերպարանք է ստանում լոկալ պատմություններից համաշխարհային պատմության հեռանկարը կառուցակազմելու գործը: Դա բարդ և անընդմեջ գործընթաց է, և պատմագետների յուրաքանչյուր սերունդ դրան մոտենում է իր գիտամշակութային արժեքների չափանիշներով: Գրվել և ընթերցվել համաշխարհային պատմության համատեքստում նշանակում է մտահոգևոր մասնակցություն ունենալ արդի աշխարհին՝ անընդհատ հաստատելով և վերակառուցելով սեփական ազգային և քաղաքակրթական ինքնությունը:

Սեփական ազգային և քաղաքակրթական ինքնագիտակցությունն արդյունք է առաջին հերթին **ինքնաներկխոսության**, հրնթացս որի ազգային ես-ն անընդմեջ ինքնաչափում-ինքնագնահատում է թե՛ ներազգային, թե՛ գլոբալ ժամանակի ու արժեքների տիրույթներում⁵³: Եվ հավասարակշռության բևեռը փոփոխական է՝ կախված արդիականության մարտահրավերներից և դրանց ձգբրտ ըմբռնումներից: Խոշոր հաշվով, սա պատմական ընտրության խնդիր է, որի պատասխանները սովորաբար ձևավորվում են տվյալ հանրության մտավոր ընտրախավի (էլիտա) միջավայրում: Եվ միայն համապատասխան ընկերային կամքի առկայության պարագային այն ի գործ է վերածվելու նպատակամետ գործողությունների շարքի: Այսօրինակ հարցադրումն արդեն միտված է առ գործնական պատմագիտությունը, որը, սակայն, դուրս է մեր ներկա քնության սահմաններից:

Մեկ անգամ ևս անդրադառնալով արդի պատմագետի անհատականության հիմնախնդրին՝ ընդգծենք, որ այն պայմանական մտահոգևոր մի միջավայր է, որի հիմնարար չափումը երկխոսային ինքնամեկնությունն է, գործընթաց, որը մարմնավորում է մտակեցվածքի և գործելակերպի երեք դիմակ՝ պատմագիր (սկզբնաղբյուր, անցյալ) – պատմագետ (պատմական տեքստ, ներկա)–կրթյալ ընտրախավ (ըմբռնում, ապագայի տարրեր): Վերջին բաղադրիչը, հարկավ, բացակայում է բուն պատմական տեքստում և իրական է լոկ վերջինիս հիպերտեքստային ընդլայնման պարագային: Այս երեք դիմակի ներդաշնակությունն է, որ երաշխավորում է արժեքային այն համակարգի գոյությունը, որը կոչվում է պատմական ձմարտություն:

Կրկնենք մեկ անգամ էլ՝ պատմական ձմարտությունը գործընթաց է, բայց ոչ մեկընդմիշտ հաստատված և անփոփոխ կարգավիճակ: Գործընթաց, որը կարիք ունի անընդհատ օրինականացման (legitimation), զի միայն այդ պարագային նրա արդյունքներն ի գործ են վերածվելու իմա-

52 Տե՛ս **Marwick A.**, 2001, p. 38.

53 Տե՛ս **Ստեփանյան Ա.**, Ինքնության ազգային չափումը (նախնական դատողություններ), «Ինքնության հարցեր», Եր., 2002, N 1, էջ 29-30.

ցական արժեքների⁵⁴: Եվ պատմության ծիրում, ինչպես և հումանիտար գիտելիքի այլ տիրույթներում, օրինականացումն իրագործվում է նախ և առաջ իմաստային հղումների ճանապարհով: Դրանք հաճախ ներկայացվում են երկու տարատեսակությամբ՝ ներքին և արտաքին: Ներքինը ներպատմական հղումներն են՝ տարասեռ սկզբնաղբյուրներ և հետագոտություններ, դարաշրջաններ և դպրոցներ, մոտեցումներ և հղացքներ: Ինչ վերաբերում է արտաքին հղումներին, ապա դրանք ապահովում են պատմության իմաստային առնչություններն այլ գիտակարգերի հետ՝ իմաստասիրություն և ընկերաբանություն, բանասիրություն և քաղաքագիտություն, մեկնարկվեստ և նշանագիտություն և այլն: Ներքին և արտաքին հղումները միասին վերցրած ձևավորում են տեղեկատվական մի ընդգրկուն համացանց, որի ծիրում առանձին պատմական փաստերը ստանում են փոխկապակցված-փոխհամաձայնեցված (conventional) արժեքանություն: Այդու պատմության արժանահավատությունը ստանում է համամշակութային բովանդակություն. «Ջի պատմությունը մտավոր ներուժի և բանականության արտադրանք է և [անպայմանորեն] ենթադրում է քննություն և քննադատություն»⁵⁵:

Ամփոփում

Պատմական տեքստը յուրահատուկ տեղեկատվական (և այդու՝ պայմանական) մշակութային միջավայր է, որն ապահովում է անցումը անընթեռնելի տարտամ անցյալականությունից դեպի ընթեռնելի պատմական անցյալը: Վերջինս իրական է իբրև շարակարգություն, որի առանցքի վրա պատմական փաստերը համադրվելով վերաճում են ասույթի և ապա՝ պատումի: Իր հերթին պատմական պատումը ենթադրում է անցյալի արժեքների մեկնություն-թարգմանություն արդի գիտամշակութային լեզվի: Սա մի գործընթաց է, որի կիզակետը պատմագետի անհատականությունն է: Նրանում հարադրվում են պատմական անցյալը, ներկան և ապագայի ինչ-ինչ տարբեր՝ իրենց անհատական և ընդհանրական չափումներով: Այս պայմանական անցումները հնարավորություն են ընձեռում անհատին, հանրության (և ընդհանրապես մարդկությանը)՝ իրենց դիտարկելու պատմության բանական և ըմբռնելի շարունակականության ծիրում:

Ասվածը հնարավորություն է տալիս մեկ այլ դիտանկյունից մոտենալու պատմության պոետիկայի հիմնախնդրին: Պատմագետի ներաշխարհը թատերայնացված մտահոգևոր միջավայր է, որտեղ, բացի վերոնշյալ դիմակներից, միմյանց հարաբերվում են նաև այլ դիմակներ, որոնք ներկայացնում են պատմական տարբեր դարաշրջաններ իրենց ներհատուկ

54 Օրինականացման այս գործընթացը, որպես կանոն, լծորդվում է լեզվական խաղերի ընդհանրական դաշտին՝ համընթաց տեղեկատվական հղումներին: Տե՛ս **Lyotard J-F.**, *The Postmodern Condition: A Report on Knowledge*, Minneapolis, Univ. of Minnesota Press, 1984, pp. 6–10.
55 **Nora P.**, 1989, pp. 8–9. Այս քննություն-քննադատության արդյունքը հետարդիական հետագետի ջանքը՝ ստեղծելու կապակցված սյուժե: Տե՛ս **Robinson A.**, *Narrating the Past: History, Historiography, Memory and Contemporary Novel*, New York, Palgrave Macmillan, 2011, pp. 17–21.

արժեհամակարգերով: Լեզվական խաղերը պայմաններ են ստեղծում հաղթահարելու նրանց (իրական կամ հնարավոր) ներփակվածությունը՝ ճանապարհ բացելով պատմական ճշմարտության սկզբունքորեն նոր տարատեսակի համար: Իր կառույցով ու բնույթով վերջինս համադրական է և ենթադրում է հարընթաց շարժում առ իր բնորդը: Հընթացս դրա բացահայտվում են պատմական անցյալատեսության այնպիսի շերտեր, որոնք հնարավորություն են տալիս պատասխանելու ոչ միայն այն հարցին, թե ինչ է տեղի ունեցել, այլ նաև՝ **ինչ կարող էր տեղի ունենալ ըստ անհրաժեշտության կամ պատահականության**: Այլ խոսքով՝ հաղթահարել Արիստոտելից ժառանգված այն կարծրակերպը, ըստ որի պատմությունը դեպքերի և իրադարձությունների սոսկական շարադրանք է և չունի իմաստասիրական խոր հետազոծ [Arist., Poet., I, 1]: Եվ՝ վերահաստատել պատմության կարգավիճակն իբրև մի գիտակարգ, որը խնդիր ունի լծորդելու ընկերային ժամանակի տարասեռ չափումները՝ բանաձևելով նրան ուղղված իր հետազոտական խնդրարկումը՝ **ինչպես, երբ, ինչու** (πῶς, ποτέ, διὰ τί) [Herod., I, 1, 3]:

ՀԻՄՆԱԲԱՐԵՐ

Ալբերտ Ա. Ստեփանյան–գիտական հետաքրքրությունների շրջանակն ընդգրկում է հայ անտիկ և հելլենիստական շրջանի մշակույթի, քաղաքակրթության և պատմության տեսության հիմնախնդիրները: Հիմնական աշխատություններն են՝ Развитие исторической мысли в древней Армении, Ер., 1991, Պլուտինոս, Էննեադներ (թարգմանությունը, ուսումնասիրությունը և մեկնությունները Ա. Ստեփանյանի), Եր., 1999, Պատմության կերպափոխությունները Մեծ Հայքում, Գիրք Ա, Արտաշիայան դարաշրջան, Եր., 2012:

Զ (ԺԲ) փարի, թիվ 1 (45) հունվար-մարտ, 2014

Summary

FROM AMBIVALENT PAST TO HISTORY

Text, Narrative, Interpretation

Albert A. Stepanyan

The paper deals with the fundamental aspects of historical study and writing. The focus of them makes the personality of the historian being involved in cultural texts of the present and past. His dialogue with the «voices» of different epochs is one of the main components of historical reflection. In its turn, it motivates the scope and essence of the «questioning» of the past and opening the way to overpassing the imaginative ambiguity of the past and memory. This makes the real start of historical investigation comprising the activity of the historian from the verification of historical facts to their clustering in textual and narrative units. Only in this consequence, the interpretation of single events and large historical blocks are possible. They open the content and essence of history. And the historian gains ability of answering the fundamental questions of his investigation formulated far back by Herodotus – how, when, and why?

ՎԷՆ համահայկական հանդես

Резюме

ОТ АМБИВАЛЕНТНОГО ПРОШЛОГО К ИСТОРИИ

(Текст, нарратив, интерпретация)

Альберт А. Степанян

Статья посвящена некоторым аспектам исследования и текстовой фиксации истории. Сделан особый акцент на личность историка, вовлеченного в культурный контекст, как прошлого, так и настоящего. Его диалог «с голосами» разных эпох составляет важный аспект исторической рефлексии, ибо определяет охват и содержание интерпретации прошлого. Вопросание истории с помощью профессиональных инструментариев позволяет историку преодолеть неопределенность коллективной памяти. В собственном смысле, с этого и начинается его творческий труд: он выделяет и обрабатывает отдельные исторические факты, кластеризирует их в нарративные блоки, устанавливает их каузативные, типологические и симпатетические связи и отношения. Только в этом случае возможна интерпретация истории в рамках теорий и концепций. И историк получает возможность ответить на важнейшие вопросы своего исследования, сформулированные еще Геродотом: как, когда, по какой причине ?